ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

30 նոյեմբերի չորեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

172
(2652)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

# ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 144

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է ներկայացնել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից ասված այն խոսքերը, որոնք այդպես էլ իրականություն չեն դարձել:

Նոյեմբերի 21-ին հայտնի դարձավ, որ կոռուպցիոն հանցագործությունների քննություն իրականացնող դատավորների կազմում ընդգրկվելու համար հարցազրույցի փուլին մասնակցող երկու թեկնածուից ընտրվել է մեկը՝ դատավոր Մնացական Մարտիրոսյանը (6 կողմ, 3 դեմ):

«Սիվիլնեթ»-ը հիշեցնում է, որ այս գործերից մեկով հենց ինքը՝Նիկոլ Փաշինյանը, դատական ճանապարհով հասել է ամրագրման, որ Մարտիրոսյանը կայացրել է «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներով հաստատված՝ քաղաքացիների իրավունքների կոպիտ խախտումներով դատավճիռ»:

Ստացվում է հետեւյալ իրավիճակը. 2019-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարում է, որ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներով հաստատված՝ քաղաքացիների իրավունքների կոպիտ խախտումներով դատավճիռների հեղինակ բոլոր դատավորները պետք է հրաժարական տան, հեռանան կամ հեռացվեն պաշտոններից», 2022-ի հունվարին ՄԻԵԴ-ի վճռում հստակ արձանագրվում է, որ Մնացական Մարտիրոսյանի՝ 2009 թվականի հոկտեմբերի 12-ի որոշմամբ՝ խախտվել է քաղաքացիներից մեկի, այն է՝ ընդդիմադիր Նիկոլ Փաշինյանի՝Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իրավունքը՝ թերեւս ամենակոպիտ խախտումն արձանագրելով:

Այսպիսով, ոչ միայն «Փաշինյանը՝ընդդեմ Հայաստանի», այլեւ մյուս երկու գործերով ՄԻԵԴ-ը գտել է, որ այդ թվում Մնացական Մարտիրոսյանի կայացրած վճիռներով խախտվել են մարդկանց իրավունքները, սակայն Փաշինյանի կառավարման օրոք Մնացական Մարտիրոսյանը ոչ միայն չի լքել դատական համակարգը, այլեւ ընտրվել է Հակակոռուպցիոն դատարանի դատավորի պաշտոնում: Ի՞նչ է ստացվում. ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության՝«Վերածնվող Հայաստան» կուսակցության թեւը լքել է խորհրդարանը: Այդ մասին երեկ կուսակցությունն էր հայտարարություն տարածել՝հստակեցնելով, որ ԱԺ-ից հեռանում են ու վայր դնում պատգամավորական մանդատները: Կուսակցության առաջնորդ Վահե Հակոբյանի հետ մեկտեղ մանդատից նաեւ 2 պատգամավորներ Հռիփսիմե Ստամբուլյանն ու Ելենա Կիրակոսյանն են հրաժարվել: «Վերածնվող Հայաստան» կուսակցությունից միայն Ջեմֆիրա Միզոեւան է պահպանել մանդատը, դա էլ՝այն պատճառով, որ ազգային փոքրամասնություններին հասանելիք քվոտայով է պատգամավոր ընտրվել, հետեւաբար մանդատից հրաժարվելը նաեւ քվոտան կորցնել ու այն իշխող մեծամասնությանը՝ ՔՊ-ին հանձնել կնշանակի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝Վահե Հակոբյանի ու թիմակիցների խորհրդարանական գործունեությունը դադարեցնելը կոնկրետ նպատակներ ունի: Չի բացառվում՝ իշխանության հետ համագործակցության արդյունք է մանդատներից հրաժարվելը, այսինքն՝ Վահե Հակոբյանը ունեցվածքը փրկելու ու կալանավորվելու վտանգից ազատվելու համար համաձայնության է եկել Փաշինյանի իշխանության հետ, որ լռելայն հեռանալու է ԱԺ-ից: Իսկ այն, որ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը Վահե Հակոբյանի նկատմամբ ունի տաբերակված մոտեցում, ակնհայտ է: Օրինակ՝ Արմեն Աշոտյանին, որ որեւէ քրգործով չուներ դատավարական կարգավիճակ, արգելվեց երկրից դուրս գալ, սակայն Վահե Հակոբյանը, որը նույն կարգավիճակով մի քրգործով անցնում է, ազատ ելումուտ է անում Հայաստանից: ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը եւ քննչական մարմիններն ակնհայտորեն Վահե Հակոբյանին «փրկում են»:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝օրերս իրավապահ համակարգում ներքին քննարկում է եղել, որ ԱԺ ՔՊ-ական պատգամավոր, առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանին Հակակոռուպցիոն կոմիտեն պետք է հրավիրի հարցաքննության: Ասել է թե՝նախաքննական մարմինը պատրաստվում է ծանուցում ուղարկել Արսեն Թորոսյանին, սակայն առայժմ իրավապահ համակարգում գնահատական է հնչել, որ նրան մեղադրանք առաջադրելու պահը դեռեւս չի հասունացել: Արդեն իսկ քրեական գործով ուշագրավ հանգամանքներ են ի հայտ եկել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝այս օրերին Հակակոռուպցիոն կոմիտեն ակտիվ կերպով հարցաքննության է հրավիրում «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի աշխատակիցներին: Իսկ ի՞նչ քրեական վարույթի մասին է խոսքը: Բանն այն է, որ այս տարվա հունիսին Հակակոռուպցիոն կոմիտեն քրեական գործ է հարուցել՝ պարզելու, թե արդյոք 2020-ին՝ քովիդի համավարակի ժամանակ, պետական միջոցներն արդյունավետ են ծախսվել: Քրեական գործը հարուցվել է մի քանի հոդվածներով՝յուրացում, պաշտոնեական լիազորությունների չարաշահում, պաշտոնեական կեղծիք: Առայժմ կասկածյալներ ու մեղադրյալներ չկան: Քրեական գործը հարուցելու առիթ է դարձել Հաշվեքննիչ պալատի հրապարակած զեկույցը, որը, ուսումնասիրելով 2020-ին՝քովիդի ամենաթեժ շրջանում Առողջապահության նախարարության գործունեությունը, եզրահանգել է՝համավարակի դեմ պայքարի համար հատկացված միջոցները նպատակային եւ արդյունավետ չեն ծախսվել: 2020-ին առողջապահության նախարարի պաշտոնը զբաղեցնում էր տխրահռչակ Արսեն Թորոսյանը, որն այժմ իշխող ուժի պատգամավոր է, ՔՊ վարչության անդամ: Եւ հասկանալով գլխի գալիքը՝ԱԺ ՔՊ-ական պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանի միջնորդությամբ Թորոսյանը ընկերություն է անում Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար Սասուն Խաչատրյանի հետ: Մամուլը գրել է այս մասին. Թորոսյանը թերեւս նպատակ ունի հասնել այն բանին, որ քովիդի դեմ պայքարի շրջանակներում իրականացված յուրացումները ամբողջ ծավալով չբացահայտվեն:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը դատավոր Մնացական Մարտիրոսյանին Հակակոռուպցիոն դատարանում դատավոր նշանակելու հարցը առկախել է: Ըստ էության, նախագահականում սպասում են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմանը: «Ժողովուրդ» օրաթերթը նկատեց, որ վերջին օրերին ՀՀ նախագահը մի շարք դատավորներ է նշանակել, ավելին՝նաեւ նախագահականում դատավորների երդման արարողություններ են կայանում, սակայն Մնացական Մարտիրոսյանի նշանակման հարցը դեռ չի լուծվում: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր՝թեեւ ողջ մասնագիտական ու քաղաքական հանրույթը քննարկում է հայտնի դատավոր Մնացական Մարտիրոսյանի՝Հակակոռուպցիոն դատարանի դատավոր դառնալու հավանականությունը, սակայն ամեն ինչ դեռ վերջնական չէ: Միայն մեկ մարդ է որոշելու՝Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մնացական Մարտիրոսյանը ընտրվելու է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր, թե ոչ, եւ այդ մեկ մարդը ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն է: Հիշեցնենք, որ դատական համակարգը կոռումպացվածներից եւ մաֆիոզներից ազատելու առաքելությամբ Բարձրագույն դատական խորհուրդ գործուղված Կարեն Անդրեասյանի ղեկավարման օրոք Մնացական Մարտիրոսյանը ԲԴԽ-ի կողմից ընտրվեց Հակակոռուպցիոն դատարանի դատավոր, եւ հիմա նրա նշանակման դիմումը ուղարկվել է ՀՀ նախագահին, որ ստորագրի:

ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐ

# ՀԱՄԱՁԱՅՆ Է ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՀԵՏ

**Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է, որ պատերազմից հետո, այո, հակաօդային պաշտպանությունը համալրելու ու վերազինելու հետ կապված ոչ բոլոր հարցերն են հաջողել լուծել: Վստահեցնում է, որ սպառազինություն ձեռք բերելու ու զինանոցը համալրելու գործընթացն իշխանությունները դեռևս 2020-ի աղետալի պատերազմից հետո էին սկսելու:**



**-Պարոն Աղազարյան, պատերազմից 2 տարի անց մենք ի՞նչ դասեր ենք քաղել:**

- Ոչ թե 2 տարի անց, այլ դեռ ավելի վաղ էինք սկսել բանակն ու պաշտպանական ոլորտը վերազինելու ու ամրացնելու գործընթացը: Երբ ասում ենք՝ շարժվելու ենք «խաղաղության օրակարգով», ապա դա չի նշանակում, թե երկրի պաշտպանության կամ բանակը վերազինելու հարցը մի կողմ ենք դնելու: Եթե անգամ կարողանանք ապահովել «մեկին տասը» հարաբերակցությամբ, այսինքն՝ Ադրբեջանի սպառազինության «մրցավազքին» կարողանանք դիմակայել 1/10 հարաբերակցությամբ, ապա դա մեզ ամբողջապես բավարար կլինի դիմակայելու համար Ադրբեջանի ոտնձգություններին: Հաշվի առնելով հանգամանքը, որ մեր ռազմավարական գործընկերը՝ Ռուսաստանը, Ուկրաինայի հետ ռազմական գործողություններ է ծավալում, այսպես ասած, ռազմական նշանակության իր հարցերով է ծանրաբեռնված, սպառազինությունը ձեռք բերելու համար այլ տարբերակներ կամ միջոցներ ենք փնտրում ու գտնում:

**-Պարոն Աղազարյան, բայց ընդդիմադիր Ձեր գործընկերներն ասում են, որ 44-օրյա պատերազմից 2 տարի անց արդեն ոչ միայն Արցախի, այլ նաև Հայաստանի օդն է անպաշտպան: Այս իմաստով կառավարության կամ ՊՆ-ի նախաձեռնած քայլերը բավարար համարո՞ւմ եք:**

-Իհարկե, բավարար չեմ համարում եւ այդ իմաստով համաձայն եմ ընդդիմադիր մեր գործընկերների հետ, որ նմանօրինակ հարցերը դեռեւս չենք հասցրել ամբողջությամբ լուծել, բայցեւ փաստենք, որ բանակում ու սպառազինության ոլորտում առկա խնդիրները, որոնք պետք է 20-25 տարների ընթացքում լուծվեին, 4 տարում պարզապես հնարավոր չէր լուծել: Հավատացեք՝ այս ամենը նրանց հակադարձելու համար չէ, որ ասում եմ, այլ զուտ այն իմաստով, որ սպառազինություն ձեռք բերելու հետ կապված մեծ հարցեր ու խութեր կան: Համաշխարհային հանրությունը տեսնում է, որ մենք խաղաղության օրակարգով շարժվող երկիր ենք, հետեւաբար աշխարհին պետք է ցույց տալ, որ մեր՝ զենք ձեռք բերելու ցանկությունը միմիայն պաշտպանողական նշանակություն ունի: Կարծում եմ՝ մեզ հետ համագործակցող մեր բոլոր գործընկերները հասկացել են մեր այս՝ սոսկ պաշտպանվելու համար զենք ձեռք բերելու դիրքորոշումը:

Իրականում զինամթերքի ձեռք բերման գործընթացը բավականին բարդ գործընթաց է: Ինչու՝ որովհետեւ մեզ զենք վաճառել պաստրաստվող պետություններն իրենց հարաբերությունները նախ պետք է Թուրքիայի, Ադրբեջանի, Իսրայելի կամ Պակիստանի հետ ճշտեն, ապա նոր միայն անցնեն զենք վաճառելուն: Այսինքն՝ չի կարող ստացվել այնպես, որ մեզ զենք վաճառելով՝ որեւէ երրորդ երկիր «նեղացնի» կամ հարաբերություններ փչացնի վերոնշյալ երկրներից որեւէ մեկի հետ: Ինչ վերաբերում է զենք ձեռք բերելու պայմանագրերի հետ կապված հարցերին, ապա այստեղ նույնպես խնդիրներ կան. վաճառքի նպատակով զենք արտադրող երկրները պետք է նաեւ համապատասխան լիցենզիա ունենան, իսկ այդ լիցենզիան ձեռք բերելու համար պետք է ստանալ տվյալ երկրի թույլտվությունը: Այսինքն՝ սրանք բոլորը հարցեր են, որոնք համալիր լուծում են պահանջում ու մեկ օրում լուծել հնարավոր չէ:

**-Բայց Ձեր կողմից մատնանշված հարցերը նույնպես լավ բանակցող են պահանջում:**

-Իհարկե, բայց լավ բանակցող ասելով՝ չի կարելի հասկանալ հետեւյալը. պետությունից 100 միլիոն դոլար վերցնել, դրանից 10 միլիոնը կաշառք տալ, մնացած 90 միլիոնով փորձել ինչ-որ բան ձեռք բերել երկրի համար: Ես, իհարկե, կդժվարանամ ասել՝ դա ճիշտ է, թե ոչ, կամ մենք արդյոք կարող ենք նման կերպով զենք ձեռք բերել, բայց, ըստ իս, մեր իշխանության՝ զենք ձեռք բերելու մասով վարած քաղաքականությունը նույնպես սխալ չէ:

*Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ*

ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՊԱՀԱՆՋ

# ԵՐՐՈՐԴ ԽԱՅՏԱՌԱԿ ՄԻՋԱԴԵՊԸ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

**«ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության մի խումբ աշխատակիցների կողմից Վանաձոր քաղաքի մի քանի քաղաքացիների (այդ թվում՝ անչափահաս) նկատմամբ բռնության կիրառումն անընդունելի է»,- հաղորդագրություն է տարածել ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:**

«Նոյեմբերի 25-ին Նիկոլ Փաշինյանի ավտոշարասյան համար ճանապարհ բացելիս պարեկները բռնություն են կիրառել մի քանի քաղաքացու նկատմամբ: Հրապարակված տեսանյութերում որոշակիորեն երեւում է, թե ինչպիսի վնասվածքներ են առկա հիվանդանոցում գտնվող քաղաքացիների մոտ, իսկ վերջիններիս կողմից ներկայացված դեպքի հանգամանքներն առնվազն մտահոգիչ են:

ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանված են ոստիկանության ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու հրազենի գործադրման հիմքերը, սակայն դրանք դիտարկվում են որպես բացառիկ միջոց եւ կիրառվում են ըստ էության իրավախախտի նկատմամբ:

Դատապարտելով ցանկացած բռնության դրսեւորում՝ հարկ եմ համարում այս համատեքստում ընդգծել, որ պետության պոզիտիվ պարտականությունն է ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու համար ապահովել առնվազն այնպիսի պայմաններ, որ քաղաքացին առավելագույնս զերծ մնա պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող այլ անձի (անձանց) կողմից ոչ իրավաչափ ուժի գործադրումից:

Դեպքի առիթով պարզաբանումներ եմ պահանջել ՀՀ ոստիկանապետից: Հետեւողական եմ լինելու համանման դեպքերին արագ եւ արդյունավետ արձագանքելուն, ինչպես նաեւ իմ լիազորությունների շրջանակում դրանց հնարավոր կանխարգելմանը:

Արձանագրենք, որ սա երկրորդ ամոթալի ու խայտառակ միջադեպն է Նիկոլ Փաշինյանին ուղեկցող ավտոշարասյան կողմից. հղի կինը՝ Սոնա Մնացականյանը, սպանվեց Պարոնյան փողոցում վթարից: Հիմա էլ քաղաքացիների ծեծն է, այդ թվում՝ անչափահասի… Հայկական ժողովրդավարությունը շատ տարբեր է…»-, գրել է Թովմասյանը:

## ԳԵՐԹԱՆԿԱՐԺԵՔ ԳՈՒՅՔ

ArmLur.am-ը երեկ գրել էր, որ Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք բուքմեյքերական ընկերությունների գործունեությունն էլ ավելի է ծաղկում: Չնայած հանգամանքին, որ անցած տարիներին գործադիրը տարբեր օրենքներով սահմանափակել է բուքմեյքերական ընկերությունների գովազդները, գործունեության բնույթն ու տեղակայման վայրերը, սակայն խաղադրույքի ծավալները Հայաստանում ահագնացող տեմպերով են աճում: Միայն նախորդ տարի՝ 2021-ին, մոտ 4 տրիլիոն դրամի խաղադրույք է կատարվել:

Թե հայրենի իշխանավորներն ինչպես են պատկերացնում խաղամոլության դեմ պայքարը, փոքր-ինչ դժվար է հասկանալ կամ կռահել, քանզի փաստերն ու թվերն այն բանի մասին են վկայում, որ, օրինակ, «Վիվարո» ընկերության սեփականատերերը շարունակ հարստանում են, խաղամոլությամբ տառապող հաճախ աղքատ քաղաքացիները՝ ավելի աղքատանում:

Իսկ վերոնշյալ ընկերության սեփականատերերն այնքան են հարստացել, որ, ըստ Civilnet-ի հրապարակման, 2.5 միլիոն դոլարով պատրաստվում են ՀՀ պաշտպանության նախկին նախարար Վիգեն Սարգսյանի՝ Հյուսիսային պողոտայում գտնվող բնակարանը գնել:

Ի՞նչ է ստացվում. խաղամոլության աճող տեմպերի հաշվին՝ ընկերությունը հարստանում է, դրա տերերը գերթանկարժեք գույք են ձեռք բերում:

## ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆԱԾ ՆԻՍՏԻՆ

Խորհրդարանական ընդդիմությունը դեկտեմբերի 2-ին ԱԺ արտահերթ նիստ է նախաձեռնել:

Արտահերթ նիստում կքննարկվի «Հայաստան» խմբակցության հեղինակած ՀՀ ԱԺ հայտարարության նախագիծը՝ ընդդեմ Ադրբեջանի խորհրդարանի՝ 2022 թվականի նոյեմբերի 8-ի հայտարարության: Հայտարարության հիմնական զեկուցողը պատգամավոր Անդրանիկ Թեւանյանն է:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը դեռեւս որոշում չունի արտահերթ նիստին մասնակցելու վերաբերյալ: Առավել հակված են բոյկոտել ընդդիմության նախաձեռնած օրակարգը, քանի որ հայտարարության տեքստում գրված է. «Արցախը երբեք չի լինի Ադրբեջանի կազմում». սա ՔՊ-ին վանում է:

Իշխող խմբակցությունից փորձեցինք ճշտել՝ գալու են այդ օրը խորհրդարան, քվորում ապահովելու են արդյոք:

«Երբ որոշում լինի, կհայտարարենք»,- ArmLur.am-ի հարցին ի պատասխան՝ ասացին ՔՊ-ից:

## ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ «ՍՐՏԻ ՕԼԻԳԱՐԽՆԵՐԻՑ»

Վարչապետի տիկին Աննա Հակոբյանն այժմ էլ սկսել է ֆուտբոլով հետաքրքրվել: Օրերս նա «Ուրարտու» ֆուտբոլային ակումբ է այցելել, շրջել ակումբի տարածքում գտնվող թանգարանում, մարզադաշտերում եւ այլն, կարճ ասած՝բավականին ջերմ ընդունելության է արժանացել: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրուցում «Ուրարտու» ակումբի գործադիր տնօրեն Դավիթ Մարտիրոսյանն ասաց, որ տիկին Հակոբյանն իրենց հրավերով է ակումբ այցելել: «Դա պարզապես ճանաչողական այց էր, զրույց ու շփում մեր երեխաների հետ»,- մեզ հետ զրույցում նշեց նա: Մեր հարցին, թե Աննա Հակոբյանն ինչ կապ ունի ֆուտբոլի հետ կամ ինչքանով է շահագրգիռ անձ, որ հրավիրել են, Մարտիրոսյանն արձագանքեց. «Դե ուղղակի հրավիրել ենք, չենք մտածել, որ շահագրգիռ կողմ է կամ ֆուտբոլի հետ կապ ունեցող անձ: Մենք կանանց թիմեր ունենք, իրեն էլ ամենաշատը հենց այդ հարցն էր հետաքրքրում, թե ինչ վիճակում է կանանց ֆուտբոլը: Նման հայտնի մարդկանց, սպորտսմենների հետ հանդիպումներ մենք հաճախ ենք կազմակերպում»: Իսկ հայտնի մարդկանցից, ըստ ակումբի Facebook-ի էջում ներկայացվածի, օրինակ, վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանն է: Անհասկանալի է, թե ինչ նպատակով կամ տրամաբանությամբ է մասնագիտությամբ արեւելագետ պաշտոնյան գնացել «Ուրարտու» ու ֆուտբոլի պատմությանը վերաբերող թանգարանի ժապավեններ կտրել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Ուրարտու» ակումբի ու իշխանությունների «սերը» միայն Աննա Հակոբյանի կամ Արայիկ Հարությունյանի այցերով չի սահմանափակվում: Ակումբի նախագահ Ջեւան Չելոյանցը մեկ անգամ չէ, որ հանդիպել է վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ, նրան ներդրումների հետ կապված (հիմնականում՝ մարզադաշտեր կառուցելու մասով) ծրագրեր ներկայացրել: Մեր թերթի տեղեկություններով՝ մեծահարուստ այս անձնավորությունը բավականին սերտ կապեր նաեւ Ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանի հետ ունի: «Անգամ սեփական ինքնաթիռ ունի, երբեմն ինքնաթիռ է ուղակում, որ Մելիքբեկյանին տանի արտերկիր՝ ծնունդը նշելու»,- ասաց «Ժողովուրդ» թերթի աղբյուրը: Մի խոսքով, իշխանության սրտի օլիգարխներից կամ դոնորներից մեկն էլ բացահայտվեց՝Ջեւան Չելոյանց:

## ԿԵՂԾ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Վահե Դալլաքյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀՊՆ N զորամասի 1-ին հրաձգային գումարտակի ականանետային մարտկոցի ղեկավարման դասակի հետախուզական ջոկի հրամանատար, պայմանագրային զինծառայող, կոչումով կրտսեր սերժանտ, օգտագործել է ակնհայտ կեղծ փաստաթուղթ, այն է՝ սպայական կոչում ստանալու նպատակով ՀՀ ՊՆ N զորամասի համալրման բաժանմունք է ներկայացրել քննությամբ դեռեւս չպարզված անձի կողմից կեղծված ակնհայտ կեղծ փաստաթուղթ հանդիսացող ՀՀ պետական ճարտարագիտական համալսարանի կողմից տրված համապատասխան դիպլոմ:

«ՎԵՐԱԾՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆ»

# ԴԱԴԱՐԵՑՆՈՒՄ Է ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱԺ-ՈՒՄ

**«Վերածնվող Հայաստան» կուսակցության խորհրդի 2022 թվականին նոյեմբերի 28-ին կայացրած որոշմամբ՝ կուսակցությունը դադարեցնում է գործունեությունը ՀՀ Ազգային ժողովում:**

Կուսակցության անդամ չորս պատգամավորներից երեքը՝ կուսակցության նախագահ Վահե Հակոբյանը, փոխնախագահներ Հռիփսիմե Ստամբուլյանն ու Ելենա Կիրակոսյանը, օրենքով սահմանված կարգով դիմում են ներկայացրել՝ իրենց մանդատներից հրաժարվելու վերաբերյալ:

«Վերածնվող Հայաստան» կուսակցության անդամ Ջեմֆիրա Միրզոեւան, ով ՀՀ 8-րդ գումարման Ազգային ժողովում ներկայացնում է Հայաստանի ասորական համայնքն ու խորհրդարան է անցել ՀՀ ԱԺ արտահերթ ընտրությունների «Հայաստան» դաշինքի համապետական ցուցակի երկրորդ մասով ազգային փոքրամասնությունների համար նախատեսված քվոտայով, կշարունակի պատգավորական գործունեությունը՝ սեփական դիմումի համաձայն ժամանակավորապես սառեցնելով կուսակցությանն իր անդամությունը: Կուսակցության խորհրդի նման որոշումն արդյունք է առաջին հերթին ՀՀ ազգային փոքրամասնությունների նկատմամբ հարգանքի եւ նպատակ ունի որեւէ կերպ չխոչընդոտել ազգային փոքրամասնությունների խնդիրների բարձրաձայնման ու լուծման ուղղությամբ հետեւողականությունը, որը Ջեմֆիրա Միրզոեւայի գործունեության կարեւոր մասն է:

«Վերածնվող Հայաստան» կուսակցության խորհրդի որոշման համաձայն՝ կուսակցության այն անդամները, որոնք ներկայացված են դաշինքի նախընտրական ցուցակում, պատգամավորական մանդատի ստացման հերթը հասնելու պարագայում ազատ են որոշում կայացնելու՝ վերցնել մանդատը, թե ոչ: Մանդատ վերցնելու որոշում կայացնելու դեպքում տվյալ անձինք պետք է լքեն կուսակցության շարքերը:

«Վերածնվող Հայաստան» կուսակցության խորհրդի որոշումը երկար քննարկումների ու խորհրդի անդամների կոնսենսուսի արդյունք է: Մենք բազմիցս հայտարարել ենք, որ խորհրդարանական գործունեությունն ու պատգամավորական մանդատները մեզ համար ինքնանպատակ չեն: Կուսակցության ներկայացուցիչներն արել են առավելագույնը՝ ԱԺ-ում եւ ԱԺ-ից դուրս առկա խնդիրները բարձրաձայնելու, իրավիճակի հանգուցալուծման ճանապարհներ փնտրելու ուղղությամբ: Եվ, այնուամենայնիվ, այսօր մենք շարունակում ենք մնալ այն կարծիքին, որ բոլոր այն հիմքերը, որոնք ստիպում էին բոյկոտել ԱԺ նիստերն ամիսներ առաջ, շարունակում են արդիական մնալ նաեւ այսօր:

Կուսակցության խորհրդի որոշումը նաեւ մեր հանրության տարբեր շերտերի հետ շփումների եւ քննարկումների արդյունք է, եւ առավել քան վստահ ենք, որ մեր հայրենակիցների, պայքարի մեր ընկերների համար սա ընդունելի ու հասկանալի քայլ է:

«Վերածնվող Հայաստան» կուսակցությունը շարունակելու է իր գործունեությունը ընդդիմադիր դաշտում կուսակցության հռչակած արժեքների ու քաղաքականության շրջանակներում:

Միաժամանակ շնորհակալություն ենք հայտնում ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության մեր գործընկերներին անցած ճանապարհի ու համատեղ աշխատանքի համար՝ մաղթելով հաջողություն իրենց գործունեության ու պայքարի մեջ:

Վստահ ենք՝ ընդդիմադիր դաշտի մեր գործընկերների հետ փոխգործակցությունը շարունակական կլինի նաեւ ապագայում՝ հիմնված ընդհանուր գաղափարների ու միասնական նպատակների վրա:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

## ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ՝ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ

Նոյեմբերի 28-ին Փարիզ կատարած աշխատանքային այցի շրջանակներում Ախ քարտուղար Արմեն Գրիգորյանը հանդիպել է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի՝ Մայրցամաքային Եվրոպայի եւ Թուրքիայի հարցերով խորհրդական Իզաբել Դյումոնի, Ֆրանսիայի ԱԳՆ Մայրցամաքային Եվրոպայի վարչության տնօրեն Ֆրեդերիկ Մոնդոլոնիի, Ֆրանսիայի Պաշտպանության նախարարության միջազգային հարաբերությունների եւ ռազմավարական պլանավորման վարչության պետի տեղակալ, փոխադմիրալ Քրիստոֆ Լուկայի եւ ԵԱՀԿ Մինսկի խմբի Ֆրանսիայի համանախագահ Բրիս Ռոքֆոյի հետ:

Հանդիպմանը զրուցակիցները մտքեր են փոխանակել երկուստեք հետաքրքրություն ներկայացնող միջազգային եւ տարածաշրջանային անվտանգային օրակարգի մի շարք հարցերի շուրջ: Ախ քարտուղարը վերահաստատել է Հայաստանի պատրաստականությունը նպաստելու մեր տարածաշրջանում անվտանգային միջավայրի ապահովմանը:

Զրուցակիցները գոհունակությամբ ընդգծել են վերջին շրջանում առավել ակտիվացած Հայաստան-Ֆրանսիա երկկողմ բազմալորտ հարաբերությունների զարգացման դինամիկան:

## ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵՐԸ ՀԱՆՁՆԵԼ Է

Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանին իր հավատարմագրերն է հանձնել Հայաստանում Նոր Զելանդիայի նորանշանակ դեսպան Սառա Մերի Ուոլշը (նստավայրը՝Մոսկվա):

Նախագահ Խաչատուրյանը շնորհավորել է դեսպանին նշանակման կապակցությամբ եւ հույս հայտնել, որ այս նշանակումը կնպաստի երկու երկրների միջեւ փոխշահավետ համագործակցության զարգացմանը:

## ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արմեն Արզումանյանն ընդունել է Հայաստանում Ճապոնիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆուկուշիմա Մասանորիին:

Զրուցակիցները կարեւորել են Հայաստանի եւ Ճապոնիայի միջեւ առեւտրատնտեսական հարաբերությունների զարգացումը եւ գործարար կապերի ընդլայնումը:

Հանդիպմանը քննարկվել են նաեւ «ԷՔՍՊՈ 2025 Օսակա, Կանսայ, Ճապոնիա» համաշխարհային ցուցահանդեսի պլանավորմանն ու այդ խոշորագույն միջոցառմանը Հայաստանի մասնակցությանը վերաբերող մի շարք հարցեր:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է

# ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԴԵՊՔ

**ՀՀ ազգային անվտանգության ծառայության ռազմական հակահետախուզության դեղարտամենտի ծառայողների մշակած եւ ձեռնարկած ծավալուն օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ ՀՀ քաղաքացի, ՊՆ N զորամասի կոչումով մայոր սպան 2021 թվականի հուլիսին հայտնվել է օտարերկրյա հատուկ ծառայությունների ուշադրության կենտրոնում, հավաքագրվել նրանց կողմից, նրանց հետ համագործակցության վերաբերյալ համաձայնագիր ստորագրել:**

Այնուհետեւ, ծառայության նշանակվելով ՀՀ ՊՆ մեկ այլ զորամասում՝ որպես զորամասի ծառայություններից մեկի պետ, ծառայության ընթացքում օտարերկրյա հատուկ ծառայություններից հաղորդագրությունների միջոցով ստանալով համագործակցությունը շարունակելու վերաբերյալ առաջարկություն եւ ընդունելով այն, պարտավորվել է վարձատրության դիմաց հավաքել եւ օտարերկրյա հատուկ ծառայություններին հանձնել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, տարածքային անձեռնմխելիությանը եւ արտաքին անվտանգությանն ի վնաս օգտագործելու համար ռազմական բնագավառի պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններ, որպիսի պայմաններում իր հանցավոր գործունեությունն իրագործելով՝ 2022 թվականի փետրվարից մինչեւ նոյեմբերն ընկած ժամանակահատվածում հավաքել եւ իր կողմից օգտագործվող տարբեր բջջային հավելվածների միջոցով օտարերկրյա հատուկ ծառայության ներկայացուցչին է հանձնել պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող ռազմական բնագավառի տեղեկություններ, մասնավորապես՝ գաղտնի դրոշմով տարբեր բովանդակության փաստաթղթեր, իր ծառայության վայրի, ստորաբաժանումների ուղղվածության, տեսակի եւ քանակի, ինչպես նաեւ նշված ստորաբաժանումների կողմից ՀՀ արեւելյան եւ հարավային ուղղություններում ծառայություն իրականացնելու վերաբերյալ տվյալները, որոնց դիմաց որպես վարձատրություն օտարերկրյա հատուկ ծառայության ներկայացուցչից տարբեր օրերի ընդհանուր ստացել է 19.700 ԱՄՆ դոլար գումար՝ այդկերպ կատարելով պետական դավաճանություն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության:

ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում հիշյալ սպային ներկայացվել է մեղադրանք, դատարանի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է:

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը եւս մեկ անգամ հորդորում է ՀՀ բոլոր քաղաքացիներին, այդ թվում՝ զինծառայողներին, օտարերկրյա հատուկ ծառայությունների կողմից հավաքագրված լինելու կամ համագործակցության առաջարկ ստանալու մասին անհապաղ տեղեկացնել իրավասու մարմիններին ՀՀ անվտանգությանն ու պաշտպանությանը վերաբերող հարցերը նրանց հետ քննարկելը եւ տեղեկությունների փոխանցումը բացառելու, ինչպես նաեւ համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

## ԴԵՂԱՀԱԲ՝ ԿԱԼԱՆԱՎՈՐԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի օպերատիվ բաժնի աշխատակիցները, իրացնելով ստացված օպերատիվ տեղեկությունները, Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի օպերատիվ բաժնի ծառայողների հետ համատեղ 2022թ. նոյեմբերի 28-ին՝ ժամը 14:40-ի սահմաններում, անձնական խուզարկության են ենթարկել կալանավորված անձ Կ. Մ.-ի մոտ կարճատեւ տեսակցության եկած քաղաքացի Հ. Դ.-ին, սակայն վերջինիս մոտից ոչինչ չեն հայտնաբերել: Այնուհետ տարված բացատրական աշխատանքների արդյունքում քաղաքացին թաքցրած տեղից ծառայողներին է ներկայացրել թափանցիկ պոլիէթիլենային տոպրակով փաթեթավորված օվալաձեւ 1 փաթեթ, որում առկա են եղել մարիխուանա տեսակի թմրամիջոցին նմանվող, 6.7 եւ 17.2 գրամ ընդհանուր քաշերով դեղնականաչավուն բուսական զանգվածներ, «PGN 150» գրառմամբ 8 դեղապատիճ եւ «B8» գրառմամբ 1 դեղահաբ:

Քաղաքացին բանավոր հայտարարել է, որ թմրամիջոցներին նմանվող զանգվածները քրեակատարողական հիմնարկ էր բերել կալանավորված անձին փոխանցելու համար:




Քաղաքացի Հ. Դ.-ն անմիջապես ձերբակալվել է եւ տեղափոխվել Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

## ՎՐԱԵՐԹԻ Է ԵՆԹԱՐԿՎԵԼ

ArmLur.am-ի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ երեկ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի եղբայրը՝ Արմեն Փաշինյանը, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում վրաերթի է ենթարկվել: Մեզ հայտնի դարձավ, որ վարորդը փախուստի չի դիմել, իսկ վարչապետի եղբորը կոտրվածքներով տեղափոխել են հիվանդանոց: ՀՀ քննչական կոմիտեից ArmLur.am-ին հայտնեցին, որ ՀՀ վարչապետի եղբորը վրաերթի ենթարկելու դեպքով նախաձեռնվել է քրեական վարույթ. «Նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածի 1-ին մասով: Իրականացվում է նախաքննություն»:

ԼՈՒՐԵՐ

## ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է

ArmLur.am-ին հայտնի դարձավ՝ նռնակով «Ծիրան» սուպերմարկետ մտած տղամարդու գործով նախաքննության ավարտ է հայտարարվել: Մանթաշ Ավետիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ապօրինի ձեռք է բերել ռազմամթերք հանդիսացող՝ ձեռքի բեկորային մարտական նռնակ եւ մարտական պայթուցիչ, որն ապօրինի պահել է իր մոտ եւ 16-07-2022թ-ի ժամը 22-00-ին ապօրինի կրելով այն՝ գնացել է Աշտարակ քաղաքի Տ. Մեծ փողոցում գտնվող «Ծիրան» սուպերմարկետ եւ մոտենալով սուպերմարկետի մենեջերին՝ բացահայտ իր ձեռքում գտնվող նռնակը բերել է մարտական վիճակի եւ նրան ներկայացրել պահանջ, որ սուպերմարկետում գտնվողները դուրս չգան շինությունից, ոստիկանության աշխատակիցները իր երեխային ներկայացնեն իրեն, հակառակ դեպքում սպառնացել է նռնակը պայթեցնել:

*Ք. Մ.*

## ԱՆԶԳՈՒՇԱԲԱՐ ԿՐԱԿՈՑ

Նոյեմբերի 27-ին՝ ժամը 01.10-ին, «Դիլիջան» բժշկական կենտրոնից ոստիկանության Դիլիջանի բաժին հաղորդում էր ստացվել, որ «աջ ծնկահոդի կույր հրազենային վիրավորում» ախտորոշմամբ բուժօգնության է տեղափոխվել 29-ամյա երիտասարդ: Հիվանդանոց մեկնած ոստիկաններին երիտասարդը հայտնել է, որ ժամը 00.20-ի սահմաններում գրպանում եղած ինքնաշեն գրիչ-ատրճանակով անզգուշաբար կրակել է ոտքին: Դեպքի վայրում՝ Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի շենքերից մեկի մոտ, ոստիկանները հայտնաբերել են ինքնաշեն գրիչ-ատրճանակը:

## ՄԵԿ ԱՆՁ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

Նոյեմբերի 19-ին՝ ժամը 21.10-ին, «Տաշիր» բժշկական կենտրոնից ոստիկանություն հաղորդում էր ստացվել, որ անգիտակից վիճակում բուժօգնության է տեղափոխվել Տաշիր քաղաքում բնակվող 52-ամյա մի տղամարդ: Տաշիրի բաժնից հիվանդանոց մեկնած քրեական հետախույզները պարզեցին, որ նա բուժհաստատություն էր տեղափոխվել Տաշիր քաղաքի Վազգեն Սարգսյան փողոցից: Նախնական տվյալներով՝ չբնակեցված մի շինությունում հիվանդանոց տեղափոխված տղամարդը եւ նրա 44 ու 50 տարեկան ծանոթները հացկերույթ էին կազմակերպել, նաեւ օգտագործել էին ոգելից խմիչք: Այդ ընթացքում նրա եւ 44-ամյա ծանոթի միջեւ վեճ էր սկսվել, որն ուղեկցվել էր հայհոյանքներով: 44-ամյա տղամարդը ձեռքերով եւ ոտքերով բազմաթիվ հարվածներ էր հասցրել 52-ամյա տղամարդուն, այնուհետեւ նրան թողել ու հեռացել էին: Ծեծված տղամարդը օգնություն էր կանչել, որին արձագանքել էր մի անցորդ, ինչից հետո 52-ամյա տղամարդը շտապօգնության մեքենայով նախ տեղափոխվել էր Տաշիրի հիվանդանոց, ապա՝ Երեւան՝ հոսպիտալացվելով «Էրեբունի» բժշկական կենտրոնում: Հենց այստեղ էլ նա դեպքից 6 օր անց մահացել էր: Տաշիրի ոստիկանները հայտնաբերել ու ձերբակալել են վնասվածքներ պատճառած 44-ամյա տղամարդուն: Նա կալանավորվել է: Դեպքի հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 28-ից 29-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 44 դեպք, որոնցից 1-ը՝ նախկինում կատարված:*

# ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՐԵՐ

## ԴԱՇԻՆՔՈՒՄ ԽԱՌՆԱՇՓՈԹ Է

ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Հռիփսիմե Ստամբուլյանը, Ելենա Կիրակոսյանն ու Վահե Հակոբյանը վայր են դնում պատգամավորական մանդատները: Նրանցից առաջ էլ, հիշեցնենք, Արամ Վարդեւանյանն էր մանդատից հրաժարվել ու հայտնել փաստաբանական ոլորտ վերադառնալու մասին: «Ժողովուրդ» օրաթերթն ավելի վաղ էր գրել, որ «Հայաստան» խմբակցության մի շարք պատգամավորներ առաջիկայում կլքեն խմբակցությունը, այդ պատգամավորների թվում՝ «Վերածնվող Հայաստան» կուսակցության անդամները: Եթե մեկշաբաթյա ժամկետում պատգամավորներն իրենց՝ ԱԺ նախագահին ուղղված՝ պատգամավորական լիազորությունները դադարեցնելու մասին դիմումները հետ չվերցնեն, ապա նրան փոխարինելու կգան «Հայաստան» դաշինքի նախընտրական ցուցակի հաջորդ համարները: Բայց հաշվի առնելով հանգամանքը, որ «Վերածնվող Հայաստան» կուսակցությունը դադարեցնում է խորհրդարանական գործունեությունը, ապա վերոնշյալ պատգամավորները ոչ միայն հետ չեն վերցնի ԱԺ նախագահին ուղղված իրենց դիմումները, այլեւ «Հայաստան» դաշինքի հաջորդ համարները, որ «Վերածնվող Հայաստան» կուսակցության անդամներ կարող են լինել, նույնպես կհրաժարվեն իրենց հասանելիք մանդատից: ArmLur.am-ը դեռ նախորդ շաբաթ՝ Վարդեւանյանի մանդատը դնելուց հետո էր գրել, որ դաշինքի հաջորդ համարները դժվար թե վերցնեն պատգամավորական մանդատները: Նրանք բժիշկ Ռիմա Ղազարյանն ու ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի դեկան Ռուբեն Մելքոնյանն են: Հերթական համարը Սեյրան Օհանյանի՝ հասարակական հիմունքներով օգնական, դաշնակցական Միեր Սահակյանն է, որը, ըստ երեւույթին, չի հրաժարվի իրեն հասանելիք մանդատից:

## ՆՈՐ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

Ազգային ժողովի ընդդիմադիր պատգամավոր, ՀՅԴ-ական Արմեն Ռուստամյանը եկող ամսվա սկզբին Ֆրանսիա կմեկնի: ArmLur.am-ը տեղեկացավ, որ «Հայաստան» խմբակցության պատգամավորը դեկտեմբերի 4-7-ը Փարիզում ԵԽԽՎ մշակույթի, գիտության, կրթության եւ լրատվամիջոցների հարցերի հանձնաժողովի նիստին կմասնակցի: Այս օրերին գործուղման մեջ է գտնվում Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ալեքսեյ Սանդիկովը: Նա Եթովպիայում՝ Ադիս Աբեբայում, «Ինտերնետ կառավարման համաժողով 2022» միջոցառմանն է մասնակցում: Գործուղումը, ըստ ԱԺ նախագահի որոշման, նոյեմբերի 26-ից մինչեւ դեկտեմբերի 4-ն է նախատեսված:

Նշենք, որ վերոնշյալ երկու գործուղումների դեպքում էլ գործուղումների հետ կապված ծախսերը պետբյուջեի հաշվին է կատարվել:

*Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ*

ՀՐԱՄԱՆ

## ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ

**Պետական եկամուտների կոմիտեից Armlur.am-ին տեղեկացնում են, որ, ՊԵԿ նախագահի հրամանի համաձայն, Բագրատաշենի եւ Գոգավանի անցակետերով ներմուծվող որոշ տրանսպորտային միջոցների մաքսային գործառնությունները, հայտարարատուի ցանկությամբ, ժամանակավորապես կարող են իրականացվել նաեւ այլ մաքսատուն-վարչություններում:**

Մասնավորապես, մինչեւ 2023թ.-ի փետրվարի 1-ը ներառյալ, պետական սահմանի Բագրատաշենի անցումային կետով ինքնաշարժ եղանակով ներմուծվող ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 ապրանքային դիրքերին դասվող տրանսպորտային միջոցների «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգերով մաքսային գործառնությունները, ինչպես նաեւ վերոնշյալ ապրանքային դիրքերին դասվող եւ ազատ շրջանառության համար բացթողնման նպատակով որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնությունները, հայտարարատուի ցանկությամբ, կարող են իրականացվել նաեւ ՀՀ ՊԵԿ Արեւելյան մաքսատուն-վարչությունում: Մինչեւ 2022թ.-ի դեկտեմբերի 1-ը պետական սահմանի Բագրատաշենի անցումային կետով բեռնարկղով ներմուծվող ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 ապրանքային դիրքերին դասվող տրանսպորտային միջոցների «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգերով մաքսային գործառնությունները, ինչպես նաեւ վերոնշյալ ապրանքային դիրքերին դասվող եւ ազատ շրջանառության համար բացթողնման նպատակով որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնությունները, հայտարարատուի ցանկությամբ, կարող են իրականացվել նաեւ ՀՀ ՊԵԿ Արեւելյան մաքսատուն-վարչությունում: 2022 թվականի դեկտեմբերի 1-ից մինչեւ 2023թ-ի փետրվարի 1-ը ներառյալ, պետական սահմանի Գոգավանի անցումային կետով բեռնարկղով ներմուծվող ԱՏԳ ԱԱ 8702, 8703, 8704 ապրանքային դիրքերին դասվող տրանսպորտային միջոցների «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգերով մաքսային գործառնությունները, ինչպես նաեւ վերոնշյալ ապրանքային դիրքերին դասվող եւ ազատ շրջանառության համար բացթողնման նպատակով որպես անձնական օգտագործման տրանսպորտային միջոց ներմուծվող ապրանքների նկատմամբ մաքսային գործառնությունները, հայտարարատուի ցանկությամբ, կարող են իրականացվել նաեւ ՀՀ ՊԵԿ Երեւանի մաքսային սպասարկման կենտրոն-մաքսատուն, վարչությունում:

*Ն.Հ.*

ՄԱՐՔ

## ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

2023 թվականին Եվրասիական տարածաշրջանի տնտեսությունների համար արտաքին պայմանները կարող են վատթարանալ: Այս մասին նշված է Եվրասիական զարգացման բանկի «Մակրոտնտեսական կանխատեսում-2023» զեկույցում: Հայաստանում պետական աջակցության միջոցների եւ ներքին պահանջարկի աճի շնորհիվ տնտեսության զարգացման համեմատաբար բարձր տեմպերն ակնկալվում են 4,2 տոկոսի սահմանում:

Ռուսաստանում տնտեսական անկումը կդանդաղի մինչեւ 2 տոկոս:

Ֆինանսական պայմանների խստացումը 2023 թվականին կհանգեցնի զարգացած երկրների ՀՆԱ-ի կրճատմանը: Աշխարհի երեք խոշորագույն տնտեսությունների դանդաղեցման պատճառով համաշխարհային ՀՆԱ-ի աճը 2022 թվականին 2,4 տոկոսից 2023 թվականին կդանդաղի մինչեւ 1,5 տոկոս: Տնտեսական ակտիվության թուլացումը հետագայում կզսպի ինֆլյացիոն գործընթացները: Ինֆլյացիոն ճնշման թուլացման նշանները զարգացած երկրների կենտրոնական բանկերին կարող են դրդել 2023 թվականի արդեն առաջին կեսին ավարտին հասցնել դրամավարկային քաղաքականության խստացման ցիկլը:

Միջնաժամկետ հեռանկարում ԱՄՆ-ի տոկոսադրույքը կպահպանվի 3 տոկոսին մոտ:

## ՄԱՆԴԱՏԻՑ ՉԻ ՀՐԱԺԱՐՎԻ

Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Ջեմֆիրա Միրզոեւան, որ «Վերածնվող Հայաստան» կուսակցության անդամներից, պատգամավորական մանդատից չի հրաժարվի: Բանն այն է, որ ասորական համայնքը ներկայացնող Միրզոեւան խորհրդարանը չի լքի զուտ այն պատճառով, որ «Հայաստան» դաշինքը մանդատ չկորցնի: Այսինքն՝ եթե ազգային փոքրամասնությունների քվոտայով խորհրդարան եկած Միրզոեւան հրաժարվի մանդատից, ապա ազգային փոքրամասնության ներկայացուցիչ-պատգամավոր ունենալու քվոտան իշխող մեծամասնությանը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը կանցնի: Հետեւաբար առանց այն էլ քիչ մանդատ ունեցող ընդդիմության շահերից չի բխում մեկով նվազեցնել դրանց թիվը:

Վահե Հակոբյանի հիմնադրած կուսակցությունն այսօր հայտարարություն էր տարածել ու նշել, որ կուսակցությունը հրաժարվում է խորհրդարանում ներկայացված լինելուց եւ լքում թե՛ ԱԺ-ն, թե՛ «Հայաստան» խմբակցությունը: Կուսակցության տարածած հաղորդագրության մեջ նշվում էր նաեւ, որ կուսակցության այն անդամները, որոնք «Հայաստան» դաշինքի քվոտայով կարող են մանդատ ստանալ, ազատ են որոշել՝ վերցնում են մանդատը, թե ոչ:

Բայց եթե պատգամավորական մանդատ վերցնեն, ապա, ըստ կուսակցության հաղորդագրության, պարտավոր են լքել կուսակցական շարքերը:

*ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ*

*● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ՃՏՊ. 19 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է Գագիկ Գեղամի Հովհաննիսյանին գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Կենտրոն, Այգեստանի 11-րդ փողոց, 173/1 հասցեում գտնվող 158,7 ք.մ. բնակելի տուն եւ 0,04865 հա հողամաս (հողամասի նկատմամբ սեփականատիրոջ բաժնեմասը կազմում է 1/2): Լոտի մեկնարկային գինը՝ 77000000 ՀՀ դրամ:

Լոտի նկատմամբ սահմանափակումներ՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 16.12.2022թ.-ին ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 30.12.2022թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ համապատասխան գույքի աճուրդի ավարտին նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.akson.am կայքը:

## ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿԱՐԾԻՔ

# ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Նախեւառաջ կամավոր հասկանում ենք, որ ուսուցիչը ինքն է որոշում կայացնում իր կամքով գնալ ատեստավորման, այսինքն՝ գնալ կամավոր ատեստավորման: Ուսուցչի ատեստավորումը հանրակրթության բոլոր նորմատիվ փաստաթղթերում սահմանվում է որպես ուսուցչի գիտելիքների, աշխատանքային կարողությունների, հմտությունների՝ զբաղեցրած պաշտոնին, որակավորման տարակարգերի բնութագրիչներին համապատասխանության որոշման գործընթաց:**



Այս կամավոր ատեստավորման դեպքում երբ ստուգվում են ուսուցիչների միայն ու միայն գիտելիքները. արդեն հասկանալի է, որ սա երբեք ատեստավորում չէ, պարզապես սա ոչ այլ ինչ է, եթե ոչ ուսուցիչների զուտ ակադեմիական գիտելիքների ստուգում: Եվ զարմանալի է եւ նաեւ ծիծաղելի, որ այս պարզ ճշմարտության աղավաղումը, տրամաբանական բառակապակցության (կամավոր ատեստավորում) բովանդակության ոտնահարումը, կեղծումը եւ անգրագիտությունը կատարվում է հենց կրթության նախարարության կողից եւ այդպես էլ մատուցվում է հանրությանը: Ուսուցիչները հասկանո՞ւմ են, որ իրենք գնում են ոչ թե ատեստավորման, այլ պարզապես կամովի գնում են իրենց առարկայական-մասնագիտական գիտելիքները ստուգելու:

Իսկ ի՞նչ է նշանակում ուսուցչի գիտելիքների ստուգում, եւ ո՞վ է սահմանում, որոշում թեստերի բովանդակությունը, ո՞վ է ստուգողը, եւ այդ ի՞նչ «հրաշք» թեստեր են, որոնք վճռում են ուսուցչի ճակատագիրը: Ո՞րն է այն դպրոցական (ոչ բուհական) գիտելիքների սահմանումը, որն անհրաժեշտ է եւ բավարար, որ ուսուցիչը պետք է տիրապետի. ո՞վ կարող է ասել: Ընդ որում՝ այսօր դպրոց են «թափանցում» նաեւ ուսուցիչների բուհական գիտելիքները:

Միանգամայն հասկանալի է, որ ուսուցիչը առարկայական չափորոշչային եւ ծրագրային պահանջներին պարտավոր է գոնե նվազագույն մակարդակով բավարարել, հակառակ դեպքում նա որպես գործող ուսուցիչ լինել չի կարող:

Ուսուցչի մասնագիտական գիտելիքների ինչպիսին լինելը մանկավարժական գիտության արդի լրջագույն խնդիրներից է եւ պահանջում է ճանաչված մանկավարժ-գիտնականների լուրջ հետազոտություններ եւ հիմնավորում:

Պարզե՞լ եք արդյոք, թե ուսուցչի առարկայական գիտելիքների լավ իմացությունը ինչքանով է չափորոշիչների պահանջներով ծառայում սովորողների կրթությանը:

Օրինակ՝ ըստ Մաթեմատիկա առարկայի չափորոշչի՝ կարեւորվում է ոչ այնքան սովորողների մաթեմատիկական գիտելիքները, ինչքան նրանց մաթեմատիկական կրթությունը, իսկ մաթեմատիկական կրթության բովանդակության հիմքը կազմում են մտածողության համընդհանուր եւ մասնավոր մաթեմատիկական մեթոդներն ու հնարքները: Եվ այս առումով մաթեմատիկական գիտելիքներն ու տեղեկությունները պետք է ներառվեն մաթեմատիկական կրթության բովանդակության կազմում ընդամենը որպես լրացուցիչ բաղադրամաս:

Եվ պետք է ասել, որ ուսուցչի առարկայական գիտելիքները շատ հարաբերական ու «չշոշափվող» հասկացություն է: Ձեզ հարց տվե՞լ եք, թե մեր հանրապետության ուսուցիչների քանի տոկոսն է, որ կկարողանա բուհերի ընդունելության քննությունների շտեմարանների թեստային առաջադրանքներից հավաքել միջին եւ բարձր միավոր: Փորձեք, կտեսնեք, որ կլինի ոչ գոհացուցիչ պատկեր:

Այստեղ գլխավոր պատճառը ոչ թե մեր ուսուցիչների թույլ լինելն է, այլ պարզապես նրանք, բացի ծրագրային-դասագրքային ամենօրյա պահանջներից ու առաջադրանքներից, այլ լրացուցիչ առաջադրանքներով ու հարցադրումներով չեն զբաղվում (իհարկե, կան նաեւ թույլ ուսուցիչներ) եւ չեն կարեւորում զարգացնել ու հարստացնել իրենց գիտելիքները:

Նաեւ նկատվում է, որ այն ուսուցիչները, որոնք աշակերտների հետ պարապում են լրացուցիչ՝ բուհեր ընդունվելու համար, նրանք մրցույթային թեստային առաջադրանքներից հավաքում են ավելի ու ավելի բարձր միավորներ եւ աչքի են ընկնում իրենց բարձր գիտելիքներով: Եվ պատահական չէ, որ այս կամավոր «ատեստավորվողների» գերակշիռ մասը հենց այդ ուսուցիչներն են, որոնք ընկնելով լրացուցիչ պարապմունքների հետեւից, մեղմ ասած, հաճախ չեն նվիրվում իրենց դասարանային պարտականություններին:

Այնպես որ, հարգելի՛ կրթության «պատասխանատուներ», ուսուցիչներին ոգեւորելու (տվյալ դեպքում՝նրանց աշխատավարձը բարձրացնելու) համար շեշտը դնելով ուսուցիչների առարկայական գիտելիքների վրա, շատ հեռու գնալ չեք կարող, որովհետեւ (դարձյալ պետք է նշել) ուսուցչի գլխավոր նպատակը, առաքելությունը չափորոշչային պահանջները կատարելն է, ուր եւ հատկապես մեծ ուշադրություն է դարձվում սովորողների կարողունակությունների (կոմպետենցիաների) ձեւավորման խնդիրներին: Առարկայական գիտելիքներ ունենալը դեռ չի նշանակում լինել ուսուցիչ. ուսուցիչը նա է, ով սովորողներին ուսուցանում, կրթում ու դաստիարակում է՝ առարկային ներկայացվող չափորոշչային պահանջներին համապատասխան:

Հանրակրթության գլխավոր խնդիրներն են սովորողների ակադեմիական իմացության, մտածողության հմտությունների, սոցիալական հմտությունների, ինքնիմացության եւ ինքնաճանաչողության հմտությունների զարգացումը:

Օրինակ՝ ըստ չափորոշչի՝ այսօր մաթեմատիկայի ուսուցման նպատակը սովորողների՝ խնդիրներ եւ վարժություններ լուծելը չէ, այլ լուծումներով խթանել սովորողի մտավոր ունակությունների զարգացումը, բարձրակարգ մտածողության ձեւավորումը, կատարել գրագետ դատողություններ եւ արագ կողմնորոշվել տարբեր իրավիճակներում:

Այսինքն՝ ըստ չափորոշչի՝ կարեւորվում է ոչ այնքան սովորողի մաթեմատիկական գիտելիքը, այլ մաթեմատիկական կրթությունը:

Հարգելի՛ կրթության «շեֆեր» եւ ամպագոռգոռ խոսողներ, Դուք համոզվա՞ծ եք, որ այդ Ձեր «թրի տակով» անցած, այսպես կոչված, կամավոր ատեստավորվողները լավ են գիտակցում ու հասկանում չափորոշչային պահանջների դերն ու նշանակությունը: Եթե նրանց չեք ճանաչում որպես ուսուցիչ (ինչպես արդեն նշվել է), ոչ թե որպես ուսուցիչ աշխատող, չգիտեք առարկայի ուսուցման նրանց որակները, եւ ինչքանով են կարողանում չափորոշիչներին համապատասխան առարկան ուսուցանել, ապա ձեզ ո՞վ է թույլ տալիս նրանց «կշիռը» այդպես մեկ հարվածով բարձրացնել, այն էլ՝ այն դեպքում, երբ իրենց կողքին աշխատող բազմաթիվ նվիրյալ ուսուցիչներ ջանք ու եռանդ չեն խնայում չափորոշչային պահանջները կյանքի կոչելու համար:

Եվ բոլոր առումներով իսկապես ծիծաղելի, որ դեռ այդ ուսուցիչների աշխատանքի արդյունքները չտեսած, «չշոշափած»՝ միանգամից «արժանանում են» բարձր աշխատավարձի:

Կրթության որակի ապահովման միակ գնահատականը չափորոշչային պահանջների կատարումն է, իսկ չափորոշչային պահանջները կյանքի կոչելու ամենաարդյունավետ եղանակը առարկայի լավ ուսուցումն է: Իսկ ի՞նչ է նշանակում լավ ուսուցում. վերապատրաստվող ուսուցիչները դա լավ գիտակցում են ու հասկանում:

Կրթության նախարարության եւ այլ պատասխանատու օղակների գործը պետք է լինի (եթե ուզում են՝ կրթության որակ լինի) հետեւել, որ ուսուցիչները իսկապես աշխատեն՝ չափորոշչային պահանջներին համապատասխան, եւ, ըստ այդմ էլ, գնահատել նրանց գործունեության որակը:

Առաջարկվում է վերացնել մանկավարժության տեսանկյունից ոչինչ չասող, անմիտ ու անգրագետ, ակնկալիք արդյունքների տեսանկյունից անորոշ ու անդեմ, չափորոշչային պահանջները աղավաղող այս շինծու կամավոր ատեստավորումը:

Լռել չէի կարող, լռել նշանակում է անձամբ մասնակիցը լինել ձեր մոլորություններին ու ինքնախաբեությանը:

Կրթության հարգելի՛ պատասխանատուներ ու «մասնագետներ», վերջ տվե՛ք ձեր հեքիմություններին:

*Ռոմեն Մնացականյան*
*Ֆիզմաթ. գիտ. թեկնածու*
*Ուսուցիչներ վերապատրաստող դասախոս*
*Հեռ. 52-95-34 բնակարան*
*(093) 69-94-17*

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# «ՄԻՍՍ ՏԻԵԶԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆ 2021»

**«Միսս Տիեզերք Հայաստան 2021» Նանե Ավետիսյանը նոյեմբերի 27-ին մասնակցելու է Երեւանում կայանալիք աշխարհահռչակ դիզայներ Jacob Meir-ի նորաձեւության ցուցադրությանը: Մոդելին տրվել է նորաձեւության ցուցադրությունը բացելու բացառիկ հնարավորությունը: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում հայտնեց Նանեն:**

«Շատ ուրախ եմ, որ ինձ նման հնարավորություն է տրվել: Սա իսկապես աննախադեպ ցուցադրություն է: Առանց ավելորդ չափազանցության պետք է փաստեմ, որ նման մարդուն հյուրընկալելը մեծ պատիվ է մեզ համար: Ի դեպ, շատ մեծ քասթինգ էր տեղի ունեցել, մասնակցել էին մոտ 1200 հոգի, արդյունքում ընտրվել են 75-ը: Ցուցադրությանը մասնակցելու են 50 աղջիկ եւ 25 տղա: Հպարտ եմ, որ հենց ես եմ բացելու ցուցադրությունը»,-մեզ հետ զրույցում ասաց Նանե Ավետիսյանը:

Նշենք, որ Jacob Meir-ը մեծ հեղինակություն ունի արտերկրում: Նրա հետ համագործակցում են այնպիսի նշանավոր դեմքեր, ինչպիսիք են Ջենիֆեր Լոպեսը, Բեյոնսեն, Փերիս Հիլթոնը, Քեթի Փերրին եւ այլք:

Մեզ հետ զրույցում Նանեն ասաց, որ այս նորաձեւության ցուցադրությունն իսկապես ստանդարտներից դուրս է լինելու, սպասվում է բացառիկ շոու, մեկ օր Երեւանը չի զիջելու նորաձեւության մայրաքաղաքներին:

Ըստ Նանեի՝ այս շոուին մասնակցելը մեծ հնարավորություն է ցանկացած մոդելի համար, քանի որ նման հեղինակության հետ աշխատանքը մեծ փորձ է: «Մեծ պատիվ էր, որ համագործակցել եմ նման հեղինակավոր պարբերականի հետ: Այն մեծ մասսայականություն է վայելում Ֆրանսիայում: Նրանց հատկապես հետաքրքրել էր այն պահը, որ հայ մոդելն անհրաժեշտության դեպքում կարող է զենք վերցնել՝ պաշտպանելու իր հայրենիքը»,-մեզ հետ զրույցում ասել էր Նանե Ավետիսյանը:

Ըստ մոդելի՝ հիմնական շեշտադրումն արված էր հայ կնոջ եւ պատերազմական իրավիճակի վրա:

«Ֆրանսիական պարբերականի ուշադրության կենտրոնում հայտնվեցի նաեւ ծավալածս գործունեության շնորհիվ: Ռազմական պատրաստություն էի անցնում, որտեղ ինձ նկատեց ֆրանսիական հայտնի Le Figaro պարբերականի լրագրող Աստղիկը՝ առաջարկելով հարցազրույց վերցնել հենց իրենց համար: Ինչ խոսք, հպարտանալու եւս մեկ առիթ է, քանի որ Le Figaro-ն Ֆրանսիայում եւս մեծ հեղինակություն ունեցող պարբերական է: Դրան էլ հաջորդեց Brut-ի առաջարկը: Ինձ համար մեծ պատիվ է, որ կարող եմ մեր երկրի մասին խոսել նման մեծ լսարան ունեցող պարբերականների միջոցով»:

Հիշեցնենք նաեւ, որ «Միսս Տիեզերք Հայաստան 2021» Նանե Ավետիսյանը հայրենիքում տարած հաղթանակից հետո «Միսս Տիեզերք» հեղինակավոր մրցույթում Հայաստանի ներկայացուցիչն էր:

*ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ*

ԵՐԿՈՒ ՀԱՄԵՐԳ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿԸ՝ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

**ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ նոյեմբերի 30-ին եւ դեկտեմբերի 1-ին Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ հանդես կգա Սանկտ Պետերբուրգի Շոստակովիչի անվան ակադեմիական ֆիլհարմոնիայի մեծ համերգասրահում եւ Պետական ակադեմիական կապելլայի համերգասրահում:**

Պետերբուրգյան հյուրախաղերը կանցկացվեն «Համաշխարհային գլուխգործոցներ» խորագրի ներքո, որը թույլ կտա նվագախմբին ներկայանալ իր կատարողական հնարավորությունների ողջ հմայքով:

Կինչեն Ա. Խաչատրյանի, Ալ. Սպենդիարյանի, Ֆ. Լիստի, Պ. Ի. Չայկովսկու եւ Յ. Սիբելիուսի ստեղծագործությունները: Համերգների մենակատարներն են թավջութակահար Դալի Գուցերիեւան եւ դաշնակահար Ադամ Գուցերիեւը: Նոյեմբերի 30-ին նվագախումբը հանդես կգա Շոստակովիչի անվան ակադեմիական ֆիլհարմոնիայի մեծ համերգասրահում՝ կատարելով Ա. Սպենդիարյանի «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը, Պ. Ի. Չայկովսկու Վարիացիաներ Ռոկոկո թեմայով՝ գրված թավջութակի եւ նվագախմբի համար, եւ Յ. Սիբելիուսի Սիմֆոնիա թիվ 2-ը: Մենակատարն է թավջութակահար Դալի Գուցերիեւան, որը Պ. Ի. Չայկովսկու անվան Մոսկվայի կոնսերվատորիայի շրջանավարտ է. այժմ որպես ասպիրանտ կրթությունը շարունակում է կոնսերվատորիայում:

Դալին միջազգային հեղինակավոր մրցույթների դափնեկիր է, դասական երաժշտության սիրահարների շրջանում ճանաչում է ձեռք բերել՝ որպես Ռուսաստանի տաղանդավոր երիտասարդ թավջութակահարներից մեկը: Նա հաջողությամբ հյուրախաղեր է ունեցել Եվրոպայի հեղինակավոր համերգասրահներում, համագործակցել է Ռուսաստանի ազգային ֆիլհարմոնիկ, Ռուսաստանի ազգային, Դանիայի թագավորական նվագախմբերի հետ, ելույթներ է ունեցել աշխարհի առաջատար դիրիժորների՝ Վ. Սպիվակովի, Դ. Օրենի, Ա. Վեդերնիկովի, Դ.Գերինգասի եւ ուրիշների հետ:

Դեկտեմբերի 1-ին Պետական ակադեմիական կապելլայի համերգասրահում Ֆիլհարմոնիկի կատարմամբ կհնչեն Ա. Խաչատրյանի Սյուիտը «Սպարտակ» բալետից, Ֆ. Լիստի թիվ 1 կոնցերտը՝ գրված դաշնամուրի եւ նվագախմբի համար, եւ Պ. Ի. Չայկովսկու Սիմֆոնիա թիվ 4-ը: Մենակատարը երիտասարդ դաշնակահար Ադամ Գուցերիեւն է: Նա Մոսկվայի Պ. Ի. Չայկովսկու անվան կոնսերվատորիային կից կենտրոնական երաժշտական դպրոցի սան է: Չնայած իր երիտասարդ տարիքին՝ Ադամը տարբեր միջազգային մրցույթների դափնեկիր է: Նա հյուրախաղերով հանդես է գալիս Ռուսաստանի ազգային, Դանիայի թագավորական եւ Սիլեզիայի ֆիլհարմոնիկ նվագախմբերի հետ, ելույթ է ունեցել դիրիժորներ Ա. Վեդերնիկովի, Դ. Օրենի, Դ. Գերինգասի, Կ. Լ. Վիլսոնի եւ այլոց հետ:

ԼՈՒՐԵՐ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՆ

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին դեկտեմբերի 3-ին նշում է հայոց առաջին լուսավորիչներ Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների տոնը: Այս մասին հայտնում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Դեռեւս 2015թ.-ին առաքյալների տոնը Գարեգին Բ Կաթողիկոսի սրբատառ կոնդակով հռչակվել է Աստվածամուխ Սուրբ Գեղարդի ուխտի օր:

Տոնի առիթով Մայր Աթոռի Սուրբ Էջմիածնի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եւ Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանում կմատուցվի Սուրբ Պատարագ, որի ընթացքում տաճար կբերվի Սուրբ Էջմիածնում պահվող համաքրիստոնեական սրբությունը՝ Սուրբ Գեղարդը:

Սուրբ Պատարագը կմատուցվի 10:30-ին: Սրբազան մասունքը հավատացյալների երկրպագության համար մատուռ-մկրտարանում կմնա մինչեւ 18:00-ն: Դեկտեմբերի 2-ին՝ ժամը 17:30-ին՝ երեկոյան՝ ժամերգության ընթացքում, Մայր Աթոռի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եւ Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանում կկատարվի նախատոնակ, որի ընթացքում դուրս կբերվեն Սուրբ Թադեոսի եւ Սուրբ Բարդուղիմեոսի մասունքները:

## ՆԵՅՄԱՐԸ ՆԵՐԿԱ ՉԷՐ

Բրազիլիայի հավաքականի եւ Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի հարձակվող Նեյմարը չէր կարողացել տրիբունայից հետեւել Շվեյցարիայի թիմի դեմ աշխարհի առաջնության երկրորդ տուրի խաղին: Բրազիլիայի հավաքականի եւ Մադրիդի «Ռեալի» հարձակվող Վինիսիուս Ժունիորը հայտնել է Նեյմարի բացակայության պատճառը: «Նեյմարը շատ տխուր էր, որ չկարողցավ հետեւել խաղին տրիբունայից: Նա վատառողջ էր: Պատճառը միայն ոտնաթաթի վնասվածքը չէր: Նեյմարը նաեւ բարձր ջերմություն ուներ: Հույս ունենք, որ նա շատ արագ կապաքինվի»,- ասել է Վինիսիուսը: Բրազիլիան Շվեյցարիային պարտության էր մատնել նվազագույն հաշվով անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» կիսապաշտպան Կազեմիրոյի գոլի շնորհիվ եւ դուրս եկել 1/8 եզրափակիչ: Նեյմարը վնասվածքը ստացել էր սերբերի դեմ առաջին տուրի խաղում (2:0):

## ԼԱՎԱԳՈՒՅՆ ԽԱՂԱՑՈՂՆԵՐ

Ֆուտբոլի աշխարհի առաջնության խմբային փուլի առաջին երկու տուրերից հետո «Բարսելոնայի» գլխավոր մարզիչ Չավին առանձնացրել է մրցաշարի լավագույն խաղացողներին.

լավագույն հարձակվող՝ Ռիշարլիսոն,

լավագույն կենտրոնական պաշտպաններ՝ Դայո Ուպամեկանո, Իբրահիմա Կոնատե,

լավագույն եզրային պաշտպան՝ Ժորդի Ալբ,

լավագույն դարպասապահ՝ Տիբո Կուրտուա,

ամենատաղանդավոր երիտասարդներ՝ Ջամալ Մուսիալա, Պեդրի:

1/8 եզրափակիչի ուղեգրեր արդեն նվաճել են աշխարհի չեմպիոն Ֆրանսիան, Բրազիլիան եւ Պորտուգալիան:

*● Դեկտեմբերի 4-ին Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա «Բերդ» պարային անսամբլի երեկոն: Տոմսերի արժեքը՝ 3000-10000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Մախսային միության ռեգիոնեն համարվող անձը Մախսային միության տարածքում հաշվառված անձնական օգտագործման ավտոմեքենայով ժամանել է Հայաստանի Հանրապետություն: Պե՞տք է ճանապարհային կամ բնապահպանական վճարներ վճարի:**

*Մարտին Յավրյան (39 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ եւ «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածների համաձայն՝ այլ պետություններում հաշվառված Հայաստանի Հանրապետություն մուտք գործող ավտոտրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման դիմաց, ըստ դրանց տեսակի եւ բեռնատարողության, եւ այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար գանձվում են բնապահպանական եւ ճանապարհային վճարներ:

*ՀՀ պետական եկամուտների կոմիտե*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ այլ պետություններում գրանցված մինչեւ 7 նստատեղով տրանսպորտային միջոցներով ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար վճարը յուրաքանչյուր մուտքի համար գանձվում է 10000 դրամ ճանապարհային վճար՝տասնհինգօրյա դրույքաչափով:

*Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ*

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

**ՀԱՐՑ. Կարո՞ղ է արդյոք ավանդի փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող մահացած անձի փոխարեն գումարը վճարվել մեկ այլ անձի:**

*Մարետա Սեպխանյան (54 տարեկան)*

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Ավանդի փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձի գումարը կարող է վճարվել ժառագության իրավունքը ճանաչած անձին, եթե ավանդատուի տվյալները ընդգրկվել են տվյալ ամսվա փոխհատուցման վճարման ցուցակում, եւ մահացել է վճարման ցուցակների ձեւավորման օրվա եւ դրան հաջորդող օրերի ընթացքում:

*ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Բացառության կարգով ավանդի փոխհատուցում ստանալը հնարավոր չէ, քանի որ ոլորտը կարգավորող իրավական ակտերով բացառություններ սահմանող դրույթներ նախատեսված չեն:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարը՝ համացանցից*

Նոյեմբերի 26-27-ը Վրաստանի Թբիլիսի քաղաքում անցկացվել է սուսերամարտի պատանիների միջազգային մրցաշար, ինչպես նաեւ Մ14 տարեկանների Եվրոպայի գավաթի առաջնություն, որոնց մասնակցել են նաեւ Հայաստանի ներկայացուցիչները:

Մ14 տարեկանների Եվրոպայի գավաթի առաջնությունում հայ սուսերամարտիկները 1 ոսկե եւ 1 բրոնզե մեդալ են նվաճել: Առաջին հորիզոնականը զբաղեցրել է Հակոբ Մանուկյանը, իսկ պատվո հարթակի երրորդ աստիճանին է կանգնել Նաիրի Ջալիբեկյանը:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **29.11.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: